

ԱՌԱՋԱՐԿ

2020-2022 թթ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կրթության և գիտության նախարարության հայտում «Աջակցություն Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին պետական այլընտրանքային (հեղինակային) կրթական ծրագրերի իրականացման համար» ծրագիրը շարունակելու, հեղինակային կրթական Բլեյան բաց ցանցով հանրապետությունում տարածելու նպատակով դրամաշնորհի հատկացնելու

Իրավական հիմքերը

ՀՀ կառավարության 2018 թվականի հուլիսի 10-ի N797-Ն որոշմամբ 2019-2021 թթ պետական միջնաժամկետ ծախսերի (այսուհետ՝ ՄԺԾ) ծրագրում ընդգրկված է «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագիրը, որի իրականացման համար նախատեսված են պետական դրամական հատկացումներ «ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ»-ին (այսուհետ՝ կրթահամալիր)՝ 2019թ.՝ 116,968.1 հազար դրամ, 2020թ.՝ 116,968.1 հազար դրամ, 2021թ.՝ 116,968.1 հազար դրամ: ՀՀ 2019թ. պետական բյուջեով նախատեսված «Նորարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում. հեղինակային կրթական ծրագրերի վերամշակում և իրականացում՝ անհատի օժտվածության զարգացման բաց համակարգ՝ ստեղծագործ անհատի կրթական պատվերի իրականացում» անվանումով-նկարագրությամբ տողով (ՀՀ 2019թ. պետական բյուջեի մասին օրենք, հավելված N1, աղյուսակ N2, դասիչ՝ 1146, ծրագիր՝ 11014) հատկացված է 116 մլն 968,1 հազար դրամ, որը հաշվարկված է, ծախսվում է «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ պետական այլընտրանքային հեղինակային կրթական ծրագրեր մշակող, կազմակերպող ու տարածող «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի՝ կանոնադրությամբ որոշված բնականոն գործունեության ապահովման համար:

Կրթահամալիրը սահմանված կարգով ԿԳ նախարարություն է ներկայացրել պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության (այսուհետ՝ դրամաշնորհ) 2019թ. աշխատանքի բովանդակությունը:

ՀՀ կառավարության 08.02.2019թ. N 65-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության [ծրագրով](#). «Դպրոցները պետք է վերածվեն զարգացման կենտրոնների՝ նպաստելով համայնքի սոցիալ-մշակութային կյանքի վերածննդին, դառնալով համայնքի համար բաց, ազատ ստեղծագործական կենտրոններ: Առանցքային են կրթության բովանդակության արդիականացումը՝ ուղղված սովորողների ճանաչողական, անձնային և միջանձնային հմտությունների զարգացմանը, դասավանդողների կարողությունների զարգացումը, մասնագիտության հեղինակության և սոցիալական ապահովության մակարդակի բարձրացումը, անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը, ինչպես նաև կրթություն-գիտություն-աշխատաշուկա կապի ամրապնդումը»:

ՀՀ վարչապետի 2019թ. մարտի 22-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի բյուջետային գործընթացը սկսելու մասին» [289-Ա որոշումով](#) սահմանվում են պարտադիր, հայեցողական, շարունակական ծախսերը, ծախսային պարտավորությունները և նոր նախաձեռնությունները: Կրթահամալիրի կանոնադրական բնականոն գործունեությունը, հեղինակային՝ պետական այլընտրանքային կրթական ծրագրերը շարունակական են, որքան կլինի կրթահամալիրը, իսկ հեղինակային կրթական ծրագրերի ընդարձակումը հանրապետությունով մեկ, դրա համար ստեղծված հեղինակային կրթական Բլեյան բաց ցանցը, մանկավարժական նորարարության տարածումը նոր նախաձեռնություն է, որն արտացոլված է 2020-2022թթ ՀՀ միջնաժամկետ ծախսային ծրագրերի ԿԳՆ հայտում ընդգրկվելու մեր առաջարկում:

2020-2022 թթ ՄԺԾ ծրագրի իրավական մյուս հիմքերը բերված են [2019-2021 թթ ծրագրում](#):

2020-2022 թթ ՄԺԾ հայտային առաջարկի իրագործմանն ուղղվում են նաև կրթահամալիրի կրթական և այլ ծառայություններից ստացված դրամական միջոցներ, ոչ պակաս, քան պետական դրամաշնորհի հատկացումները:

Իրավիճակի նկարագրությունը

2018թ. կրթահամալիրը «Հանրակրթական ծրագրերի իրականացման օժանդակության» շրջանակներում 116,968.1 հզր. դրամ դրամաշնորհ է ստացել «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրի իրականացման համար, որի եռամսյակային, տարեկան հաշվետվությունները սահմանված կարգով ներկայացվել են ԿԳԼ: 2018թ. պետական բյուջեով որոշված ծրագրի ֆինանսական ցուցանիշները՝ կատարված, իսկ ոչ ֆինանսականները նաև գերազանցված են: 2018թ. դրամական ցուցանիշներ՝ ա) պետական այլընտրանքային (հեղինակային) մանկավարժության ծրագրերի մշակման-կազմակերպման-տարածման աշխատանքների, մանկավարժական աշխատողների և սովորողների կարողությունների զարգացման բաց համակարգի պահպանման համար դրամաշնորհի միջոցներից 2018թ. հատկացվել է 40000000 դրամ, կրթահամալիրի ոչ բյուջետային միջոցներից՝ 146756000 դրամ. բ) կրթահամալիրում լրացուցիչ կրթության ծրագրերի իրականացմանը, ընդարձակմանը, կրթահամալիրի կրտսեր դպրոցների և քոլեջի կազմում գործող նախակրթարանների պահպանությանը դրամաշնորհի միջոցներից հատկացվել է 52968100 դրամ, կրթահամալիրի արտաբյուջետային միջոցներից նախադպրոցական կրթական ծրագրին հատկացվել է 73122000 դրամ, լրացուցիչ կրթությանը՝ 44812000 դրամ. գ) անհատի օժտվածության զարգացման բաց համակարգի պահպանման, նախասիրությունների զարգացման, լրացուցիչ կրթության համար դրամաշնորհի միջոցներից հատկացվել է 24000000 դրամ, կրթահամալիրի արտաբյուջետային միջոցներից՝ 42463000 դրամ (ուսումնական-հայրենագիտական ճամփորդությունների ժամանակ սննդի և գիշերակացի, մասամբ՝ ճանապարհի ծախսերը կատարվել են ծնողների և հյուրընկալողների, կրթական փոխանակումների գործընկերների միջոցներով, ինչը բերված թվերում ընդգրկված չէ): Դրամաշնորհի միջոցները, ինչպես և նախատեսված էր պետական աջակցության պայմանագրով, ուղղվել են կրթահամալիրի կանոնադրությամբ որոշված գործունեության ապահովմանը՝ պետական այլընտրանքային (հեղինակային) մանկավարժության ծրագրերի մշակման-կազմակերպման-տարածման աշխատանքներին, կրթահամալիրի կրտսեր դպրոց-պարտեզներում նախադպրոցականների խմբերի պահպանմանը, կրթահամալիրի լրացուցիչ

կրթությանը, օժտվածության զարգացման բաց համակարգի պահպանմանը: Կրթահամալիրում հեղինակային կրթական ծրագրերի մշակման, իրականացման, տարածման համար անհրաժեշտ, ծրագրերով որոշված մյուս աշխատանքները կազմակերպվում են ուսումնառության պայմանագրերով որոշված՝ ծնողական ամսական լրավճարներով, որոնք ամբողջությամբ փոխանցվում են կրթահամալիրի բանկային հաշվին, արտացոլվում կրթահամալիրի ֆինանսական մուտքերում, կրթահամալիրի խորհրդի հաստատած ուղղություններով և չափաքանակներով կատարվող ծախսերում, սահմանված կարգով ներկայացվող ֆինանսական հաշվետվություններում: Կրթահամալիրի ոչ բյուջետային այլ միջոցները՝ օրենքով սահմանված կարգով ստացվող այլ եկամուտներ, նույնպես ուղղվում են հեղինակային կրթական ծրագրի իրականացմանը: 2019թ. առաջին եռամսյակում պետական բոլոր հատկացումները, այդ թվում նաև՝ սովորողների թվով, հաստատությունների պահպանման, մասնագիտական կրթական ծրագրերի իրականացման համար, կազմել են մոտ 145000000 դրամ, իսկ ոչ բյուջետային միջոցները՝ մոտ 97000000 դրամ: Հեղինակային կրթական ծրագրի կազմակերպման, տարածման համար կրթահամալիրը հաստատում է կապեր պետական, հասարակական, միջազգային կազմակերպությունների, անհատների հետ, որոնք աջակցում են ծրագրի կազմակերպման տարբեր խնդիրների լուծմանը: Ամբողջությամբ ոչ պետական հատկացումներով են կատարվել կրթահամալիրի կրթական օբյեկտների ներքին և արտաքին բարելավում-բարեկարգումը, ուսուցողական միջավայրի արդիականացումը, լաբորատոր-արհեստանոցային համակարգի տեխնիկական հագեցումը:

[«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքով](#) որոշված պետական այլընտրանքային՝ հեղինակային կրթական ծրագրի խթանումը, հանրապետությունով մեկ ծավալումը, ՀՀ կառավարության ծրագրով նախատեսված՝ «համայնքի սոցիալ-մշակութային կյանքի վերածննդին նպաստող, համայնքի համար բաց, ազատ ստեղծագործական կենտրոն» դպրոցների ստեղծման մոտեցումների բազմազանության խթանումը, կրթական ծրագրի, ուսումնական գործունեության ընտրության ազատության ծավալումը հեղինակային կրթական ծրագրի ընդարձակումը դարձնում են առաջնահերթություն՝ հաղթահարելով Հայաստանով մեկ հաստատված մոլորությունը, թե պետական հանրակրթական ուսումնական հաստատությանը պարտադրված

է պետական կրթական ծրագիրը, որ հաստատությանը ընտրության իրավունք տրված չէ, կամ որ պետական հանրակրթական հաստատությունը պիտի աշխատի ՀՀ ԿԳ նախարարի հաստատած օրինակելի ուսումնական պլանով, որում ուսումնառության բոլոր ժամերը տնօրինված են, որոշված են ուսուցման կազմակերպման ձևերը: Հեղինակային կրթական ծրագրով ստեղծվել են ուսուցման, կրթական միջավայրի կազմակերպման նոր գործիքներ, որոնք կրթության ոլորտում կատարվող փոփոխությունների այս շրջանում կարող են օգտակար լինել պետական կրթական ծրագրում, հանրակրթական համակարգում, համայնքային զարգացման ծրագրերում: Նախորդ տարիներին կրթահամալիրում հեղինակային կրթական ծրագրով ձեռքբերումների տարածման աշխատանքն արվել է հանրապետությունով կրթական փոխանակումների, հեղինակային կրթական ծրագրով հանրապետության նախադպրոցական, հանրակրթական հաստատությունների մանկավարժական աշխատողների ամենամյա վերապատրաստումների, ամենամյա ստեղծագործական հավաքների, ուսումնական-ստուգատեսային, դաշտային-արշավախմբային-հայրենագիտական-բնապահպանական բաց ճամբարների, ուսումնական բաց նախագծերի միջոցով, քննարկվել է հեղինակային կրթական ծրագրով ստացածը կիրառելու, գործընկերների հետ համագործակցությունը շարունակելու ձևաչափը՝ ինչպես կարող է գործընկեր դպրոցը, նախադպրոցական ուսումնական հաստատությունը, լրացուցիչ կրթության դպրոցը, մանկավարժական աշխատողը:

2019թ. հեղինակային կրթական Բլեյան բաց ցանցի ստեղծումն անհնար է առանց պետական աջակցության, առանց համակարգում կրթական ծրագրերով ցանցերի ստեղծման մեխանիզմների: Ուսումնական հաստատությունը պիտի հնարավորություն ունենա ընտրելու հանրակրթական ծրագիրը [«Հանրակրթության մասին»](#) ՀՀ օրենքով՝ 3-րդ հոդվածի 6-րդ կետով որոշվածներից, պիտի հաղթահարվի այսօր հաստատված խտրական վիճակը, հատկապես որ հանրակրթական չափորոշչով որոշված հենքային ուսումնական պլանի գոյությունը դպրոցներին բազմազան լինելու՝ մինչ այս չիրացված հնարավորություններ է տալիս:

2020-2022 թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի գերակայությունները, նպատակները և խնդիրները

Առաջարկ 1. «Աջակցություն Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին պետական այլընտրանքային (հեղինակային) կրթական ծրագրերի իրականացման համար» ծրագիրը շարունական է՝ «Երևանի «Մխիթար Սեբաստացի»» ՊՈԱԿ-ին ՄԺԾԾ 2020-2022 թթ համար դրամաշնորհի հատկացնելով ոչ պակաս, քան տարեկան 125 մլն դրամ՝ որպես գնում մեկ անձից: Դրամաշնորհը ներառում է.

- հեղինակային կրթական ծրագրերի մշակում-լրամշակում, սովորողներին և ուսուցիչներին անհրաժեշտ ուսումնական էլեկտրոնային նյութերի ստեղծում, ծրագրի ուսուցիչների մասնագիտական զարգացում, ծրագրի իրագործման համար անհրաժեշտ թվային միջավայրի ստեղծում, սպասարկում.
- կրթահամալիրի դպրոց-պարտեզների կազմում գործող նախակրթարանների սաների՝ 2-5 տարեկանների խմբերի պահպանում.
- կրթահամալիրի կազմում գործող ուսումնական կենտրոնների պահպանություն, նրանցում իրականացվող արտադպրոցական ուսուցման աջակցություն.
- սովորողների նախասիրությունների, օժտվածության դրսևորման, զարգացման ֆիզիկական և մեդիա բաց համակարգի աջակցություն:

Դա արտացոլվում է պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրով:

Առաջարկ 2. Հեղինակային կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների Բլեյան բաց ցանցը արդեն իրողություն է, ինչի վկայությունն է 2019թ. ապրիլի 26-27-ին ԿԳ նախարարության հանձնարարությամբ և մասնակցությամբ կազմակերպված հեղինակային բաց ցանցի լաբորատորիայում Հայաստանի տարբեր ուսումնական հաստատություններից 200-ի չափ մանկավարժական աշխատողների մասնակցությունը: Ցանցով կրթահամալիրի մանկավարժական աշխատողների մշակած ու կազմակերպած հանրակրթական, այդ թվում՝ նախադպրոցական ու լրացուցիչ կրթության ծրագրերը, Հարավարևմտյան զանգվածից, Երևանից դուրս գալու, հանրապետությունով մեկ բնակավայրեր մտնելու իրական հնարավորություն են ստանում՝ առանց ցանցին միացող

ուսումնական հաստատությունների իրավակազմակերպական ձևերը, ենթակայությունը փոխելու: Ցանցով կրթահամալիրի մանկավարժական ձեռքբերումները արդյունավետ տարածում կունենան՝ խթանելով ուսուցիչների ստեղծականությունը, ինքնավարությունը, ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունը՝ մանկավարժական նորարարությունը: Կրթական ցանցով կրթահամալիրը գործուն կօգնի, որ ցանցին կամավոր-ինքնուրույն միացված մանկավարժ անհատները, խմբերը, հաստատությունները իրենց մանկավարժական գործի հեղինակները՝ ստեղծողներն ու պատասխանատուները դառնան:

Ցանցի ձևավորմանը, զարգացմանը մի խոչընդոտ կա՝ պետական դրամաշնորհի, դրա ծախսերի ուղղությունների, չափերի, հատկացման եղանակի որոշումը: Կրթական բաց ցանցի ընդլայնումը կնպաստի ՀՀ կառավարության 2019թ. հաստատված ծրագրով որոշված խնդիրները լուծելուն.

- բարձրացնել նախադպրոցական կրթության մատչելիության և հասանելիության աստիճանը բոլոր համայնքներում,
- դպրոցները վերածել զարգացման կենտրոնների՝ առանց փոխելու դրանց ենթակայությունը,
- զարգացնել դասավանդողների մասնագիտական կարողությունները,
- զարգացնել սովորողների ճանաչողական, անձնային և միջանձնային հմտությունները,
- անցնել համընդհանուր ներառական կրթության:

Ցանցն ընդարձակելու համար առաջարկում ենք ՄԺԾԾ ժամանակահատվածի համար նախատեսել և նախարարության միջոցով մրցութային կարգով դրամաշնորհի հատկացնել ցանցում ընդգրկված ուսումնական հաստատություններին՝ 2020թ.՝ 60 մլն ՀՀ դրամ, 2021թ.՝ 90 մլն, 2022թ.՝ 120 մլն ՀՀ դրամ: Դրամաշնորհը ներառում է՝

- լրավճար մանկավարժական աշխատողներին՝ աշխատավարձի 30%-ի չափով.
- մանկավարժական աշխատողների վերապատրաստում հեղինակային կրթական ծրագրով:

Դրամաշնորհի տրամադրելու համար մրցույթը կանցկացվի ՀՀ կառավարության 2003թ. 193-Ն որոշման համաձայն: Կրթահամալիրը կձևակերպի մրցույթին մասնակցող հաստատությանը

ներկայացվող պահանջները: Կիրականացնի ցանցում ընդգրկված ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստումը, մոնիթորինգը և մեթոդական օգնությունը: